







ու առիթն... է՛ր, ո՞ր օրինակէն օգտուելու է :

Երկնք կը դանդաղանք թէ պիտի տրուի հասարակութեանը մէկ խումբ մը շի կ'ընար անդրեցնել, քաջալերել, և հիմա մէկը երկուք շինեցին :

Եւ ի՞նչ պիտի ըլլայ Վեսելօն ասկէ ետքը : Պէնիան իր հետ վերջուցած է Յակոբեան մը, որ վարկ չունի, և որ փրկուի երբ-տասարգութեան առջեւ ինկած մըն է այսօր : Պէնիան իր հետ առերէ Սեփոն մը, որ միայն «հատուած» կը ըլլայ և որ ուղղակի իրենց գերուսան—յօգուածադրէն ծաղրուեցաւ ասկէ առաջ :

Կը մնայ հոն տիկին Յակոբեանը, կարեւոր և յարգելի ուժ մը որուն տեղն ալ, խոստովանինք, հոն չէ : Ի՞նչ կ'ուզուի Պէնիան առանձին է և առանձին ալ մտիկ կը ըլլուի բայց մէկ անդամ, երկու անդամ, ոչ միշտ : Պէնիան իր խումբը իր ներկայ կազմով չի կրնար օգտակար ըլլալ մեզի, ան իրեն պիտի քաջէ պատրաստէր՝ բայց ոչ թատերասեր հասարակութեանը :

Պապեան իր հետ առերէ խումբին կարեւոր անդամները, ճարարեան, Երամեան : Իայց գերաստուհի կը պակսի : Իրերէ արաճած իր քանակ խումբ պակասներն ալ նկատի առնել կարծէ : Պապեանի խումբը եթէ աս պակասները յաջողի լրացնել, իր ետեւէն պիտի քաջէ թատերասեր հասարակութեանը : Վէ սէլօն ներկան դաս մըն ալ կուտայ մեր թատերասեր երիտասարդութեան, որ այս կամ այն քաղաքին մէջ գոյութիւն ունի և տարուան մէջ մէկ երկու ներկայացում տալու կը ձեռնարկէ : Ասոր կ'անդրադառնամ ուրիշ անգամ :

Ա. ՀԱՍՐԱՆ

Փիլիպէ 19 սեպտ.

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Ամենայն հայոց կաթողիկոսը Թիֆլիս գացեր է. հոն պիտի մնայ ասան օրի չափ և պիտի զբաղի ներսեան դպրոցին վերաբնութեալ քանի մը ներքին խնդիրներով :

— Սօփիայի Յովհան քահանայ Մանգակունի ֆրանսերէն լեզուով ուղերձ մը կարդացեր է այժմ Սօփիա հիւր գտնուող կոմս Իկնաթիէֆին, խնդրելով որ կոմսը բարեհաճի Ձերի ուշադրութիւնը հրաւիրել հայկական խնդրին վրայ. կոմսը խոստացեր է իր ձեռքէն եկածը ընել :

— Վանայ մէջ կեդրոնական դպրոց մը բացուեր է :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐԿԻԱ

Պոլսոյ մէջ շատ Ալպանացիներ ձերբակալուեր են իշխան նիքօլայի Պոլիս գտնուելուն առթիւ :

— Լիբանանի կառավարիչ ընտրուեր է Էնէ թուրք զարձած փաշա մը :

— Նիքօլա զուքսի Պոլիս այցելութեան նպատակէ է Սուլթան համուդէլ որ Շիքիայի հանդէսները քուլաքական և է նշանակութիւն չունին :

— Իսուս կառավարութիւնը որոշեր է Միթրոպոլիտ հիւպատոս զրկելը առ այժմ՝ յետաձգել :

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Կոմս Իկնաթիէֆ մեծ ընդունելութիւն դուրէ Սօփիայի մէջ. Բուրաքաղաքի ամբողջ ազգաբնակչութիւնը մեծ ոգեւորութեամբ ընդուներ է Պոլկարիոյ ազատութեան համար աշխատող այդ կտրելու անձը : Կոմսը շատ յուզուեր է և յայտնուեր է որ իր միակ բաղձանքն է Մակեդոնիան ևս ապատուած անանկ :

ՅԻՐԱՆՍԱ

Իմիլ Զօլային արձան կանդնելու համար հանդանակութեան սկսուեր է : Կառավարութիւնը ևս թաղման պիտի մասնակցի : Յշխարհի ամէն կողմերէն ցաւակցական հեռադիրներ կուգան Զօլայի կողմը որ վտանգէ բոլորովին ազատուած է ընկերվարականներն ալ պիտի մասնակցին թաղման հանդէսին :

Ալիքէտ Տրէյֆուս Եոյնպէս ներկայ գտնուիլ ուղեր է յազարկաւորութեան՝ բայց տիկին Զօլա թախանձանօք խնդրեր է որ Տրէյֆուս ետ կենայ իր այդ որոշումէն, որովհետեւ կը վախնայ եղբր թէ կ'իւրեքր կրնան գրգռուիլ և հակադրէյֆուսական ցոյցեր տեղի կ'ունենան :

Տրէյֆուս մեծ գժուարութեամբ ետ կեցեր է իր որոշումէն :

ԹԻՍՆԱՎԱՍՏ

Լուր կը պատի որ Գերմանիոյ կայսրը մտադիր է սօսեր զօրավարները իր ներկայութեանը ընդունիլ :

Անգլիական մամուլին մէկ մասը այդ պատճառով մեծ յուզումի մէջ է :

ՀԵՂԻՍՍՏԱՆ

Յունուարի մէջ էտուարա էրդ. հանդիսաւորապէս Հեղիսստանի կայսր պիտի է հռչակուի : Այդ հանդէսին համար խոշոր գումար մը նշանակուած է :

ՌՈՒՄԱՆԻԱ

Ռումանական կառավարութիւնը Միացեալ Նահանգներու կառավարութեան նօթսոյին պատասխանած է որ այլ ևս հրէաներուն թույլ չը պիտի տրուի բաղմուտեամբ դաղլիմել :

Կը յուսացուի որ Միացեալ Նահանգներու կառավարութիւնը այդ պատասխանով պիտի զոհանայ :

— Թագուսըրը մտադիր է վանալան կուսակցութիւններու պատկանող վարչական մարդոց մէջ մտով մը գումարիլ հրէական խնդիրներու մասին խորհրդակցելու համար :

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԲՍՄԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

— 0 —

Մեք. արդէն ձեզ դրկած 1 նք արպորուած նամակներ : Ձեր բաժնեգիրները կրնաք ուղարկել կամ մեզի կամ «Հայրենիք» խմբագրութեան : Ձր վճարողներուն անունները պիտի հրատարակուին թէ՛ «Շարժում» ի և թէ՛ «Հայրենիք» ի մէջ :

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Պուրբէշի մէջ մեր բաժանորդներն ալ Գրիգոր Մաքսեան, որ անդիտակցաբար չի վճարած իւ պարտքը, իսկոյն բացատրութեանց մէջ մտաւ ու փութաց իր հին պարտքը վճարել :

Յուսով ենք որ միւս չը վճարող բաժանորդները պիտի հետեւին ալ : Մաքսեանի պատուաբեր օրինակին :

ԽՆԼԱԳՐՈՒՅԻՆ

« Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք »

Ալգային և քաղաքական

ճարարութեանը

Կը հրատարակուի շաբաթը մի

անգամ Պոսթընի մէջ

Բաժնեգիրն է արտասահմանի

համար տարեկան 10 ֆրանք :

Գրիմի հետեւեալ հասցէով

61 Էստիս Սոյ. Պարսի Մաս (Ք. Ս. Ա.)

ԿԻՉՄԱՐԱՐՅՈՒՆ «ՐԱՅՅԻ»

Վառնաուրիցա «Շիպլէնքա»

Կը կազմուին խնամքով ամեն ան-

ակ գիրքեր, տեսարկներ ու վա-

ճառականական տուարներ :

Թանձարարութիւններ կընդուն-

ուին և կը կատարուին շուտով : Ա-

յակիրաներու և աշակերտութիւններու

համար մասնաւոր զեղջ :

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

«ԲԱՒԿԷՆ ՍԻՆՆԻ» ընթերցարանի մէջ կը ծախուի Ստոմ Եարձանեանի «Իւրացանք»-ը ի նպաստ Հայ Առասնողական Միութեան :

Գիրն է 1 լիթ արծաթ :

Կը ծախուի նաեւ «Վարկալի Ազատութեան Ծանապարհին» :

Գիրն է 90 անթիմ Վառնա

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Սկսաւ հրատարակուիլ Յրանայի նշանաւոր վիպասաններէն Լուի Նուստի :

ԱՆԻԾԵԱԼ ՊԱՆԴՈՎ

Գերազանցապէս հետաքրքրաշարժ Ամէն դասակարգի դիւրաւատուելի ըլլալու համար՝ գիրքը երկու մասով երեւան պիտի լայն լից կ'ստորի մէջ և ամբողջութեամբ 52-54 թերթերէ պիտի բաղկանայ :

Իւրաքանչիւր մասին բաժանորդագրին է Վառնայի համար 1 25, ուրիշ քաղաքներու և արտասահմանի՝ 1 50, իսկ ամբողջութեամբ բաժնեգիրն է, Վառնայի համար 2, 50, և Վառնայէ դուրս 3 ֆր. ձեռքէ առնողները պիտի վճարեն անաջուան պէս՝ 8 երեսնոց պրակին՝ 5 անթիմով :

Սմէն քաղաքները և կամ գիւղերը որ մէկէ աւելի բաժանորդ ունինք, միայն մէկ հասցէի ամէն շաբաթ երկու պրակ մէկ ծրարով պիտի դրկուի, իսկ առանձին բաժանորդի պրակները 6 հատը մէկ ծրարով պիտի դրկուի : Գոսթի ծախքը հրատարակչին վրայ է : Փափաքողները պէտք է դիմեն հետեւեալ հասցէին :

Onnik Parseghian Imprimerie Orientale, Varna

Դրակի փոխարէն ևս նախադրուի ալ կընդրուուի :

ԱՆՈՒՇԱՒԱՆ

ՀԱՅԻ ՀԱՍԱՐ

կամ

ԱՂԶԱՆ ՄԷ ՅԻՇԱՍԱՒԱՐԱՆԸ

Վկայ մը իրական կեանքէ

Մամոյ տակ

Այս վկայը որ կը պարունակէ իր մէջ տեղական կեանքէ զանազան պատկերներ. հրատարակութեան Իանձնուած է հեղինակին կողմէն և սիրով պիտի ընդունուին բաժանորդներ հրատարակութեան դիւրութիւնը նշանակուելու համար :

Բաժնեգիրն է 1 ֆրանք. րօթի ծախքը հրատարակչին վրայ : Տպագրութիւնը աւարտելուն զըբէրը կը յանձնուին բաժանորդներուն : Գոյնաւոր հատոյթը ամբողջովին կը նուիրուի «Հայկական կարմիր խաչ» ընկերութեան :

Բաժանորդագրութեան համար դիմել հետեւեալ հասցէին :

Մուրուս Երանոսեան (Պուլկարի)

Отговорникъ

Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна.